Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 1528-Ա որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Սույն ընթացակարգը կարգավորում է աշխատանքային խմբի աշխատանքների կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն ընթացակարգով:

3. Աշխատանքային խումբը ձևավորվում է տնտեսական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) աշխատանքների արդյունավետության ապահովման, ինչպես նաև խորհրդի գործունեության համար խորհրդի կողմից հայցվող տեղեկատվության, առկա վերլուծական նյութերի և փաստաթղթերի համակարգման, ամբողջացման և վերամշակման նպատակով:

4. Աշխատանքային խումբը «Տնտեսական հեռանկարների կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) հետ համատեղ կատարում է խորհրդի կողմից հայցվող տեղեկատվության վերամշակում, որից հետո հիմնադրամը տեղեկատվությունը տրամադրում է խորհրդի անդամներին, ինչպես նաև խորհրդի նախագահ ՀՀ վարչապետին:

5. Աշխատանքային խմբի գործունեությունը համակարգվում է հիմնադրամի խորհրդի նախագահ Արթուր Ջավադյանի կողմից:

6. Խորհրդի անդամներն իրենց գործունեության իրականացման նպատակով առանձին դեպքերում կարող են դիմել հիմնադրամին՝ այլ անհրաժեշտ տեղեկատվություն, առկա վերլուծական նյութեր կամ այլ փաստաթղթեր (այսուհետ՝ հայցվող տեղեկատվություն) ստանալու նպատակով:

7. Հիմնադրամը դիմում է աշխատանքային խմբին՝ հայցվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:

8. Աշխատանքային խումբը հնարավորինս սեղմ ժամկետներում հիմնադրամին է տրամադրում հայցվող տեղեկատվությունը:

9. Իր գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով՝ աշխատանքային խումբը կարող է իր յուրաքանչյուր առանձին գործառույթի իրականացումը պատվիրակել իր կազմից ընտրված անձի կամ անձանց, ովքեր պատասխանատու կլինեն պատվիրակված գործառույթի պատշաճ իրականացման համար:

10. Իր գործառույթների շրջանակներում աշխատանքային խումբը կարող է դիմել Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ կազմակերպություններին՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

24.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ